

«ԱՐՓԻ»

Եթէ «Կեանք եւ Արեւտ»-ը դեռ ռուս-
 քի է եւ վճռել է «տարի մըն ալ կըն-
 ւիլ», «Արփի»-ն, որ, հինգ տարուց ի
 վեր, հրատարակուած էր Ամերիկայում
 եւ արդէն որոշ տեղ էր գրաւել մանկա-
 կան աշխարհում, մեռել է, ինչպէս
 խմբագիրն է յայտարարուած, նիւթական
 պատճառներով: Ցաւով ենք արձանագրե-
 րում այս մահը: Մի տեսակ սու ճակա-
 տագիր է կայտած մեր մանկական հը-
 րատարակութիւնների գլխին — չեն յա-
 րատուում: Քանի՜ — քանի մանկական

թերթեր երեւացին այս վերջին տարի-
 ները, եւ բոլորն էլ դժբախտ վախճան
 ունեցան: Եւ եթէ «Արփի»-ն էլ հինգ
 տարի ապրեց, գլխաւոր պատճառներից
 մէկը, անշուշտ, Հ. Կ. Խաչի ընծայած
 նիւթական եւ, մանաւանդ, բարոյական
 աջակցութիւնն էր: Այդ աջակցութիւնը
 պակասեց, խմբագիրը կամք չունեցաւ
 «տարի մըն ալ կուելու», ուրի՞շ պատ-
 ճառներ կան — բոլոր դէպքերում էլ,
 «Արփի»-ի մահը ցաւալի է: Նրա տեղը
 մնում է բաց:

ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑ ՈՒԹԵԱՆ

1934 թ. սկսած, մինչեւ վերջերս,
 «Հայրենիք» ամսագիրը, իբրեւ յաւել-
 ւած, տալիս էր Հ. Յ. Դ. Կենտրոնա-
 կան Դիւանի նիւթերը «Դիւան Հ. Յ.
 Ժամանակաշրջանը՝ Հ. Յ. Դաշնակցու-
 նիւթերի մի մասը այժմ լոյս է ընծայ-
 ւած առանձին հատորով՝ Հ. Յ. Ամե-
 րիկայի Կենտր. Կուսիտէի հրատարա-
 կութեամբ: Հատորը — 395 մեծադիր
 էջ — ընդգրկում է 1890 - 1896 թ.
 Ժամանակաշրջանը Հ. Յ. Դաշնակցու-
 թեան հիմնադրութիւնից սկսած մինչեւ
 1896 թ. ամառը: Հատորի մէջ կան բազ-
 մաթիւ եւ շատ արժէքաւոր վաւերագրե-
 րեր, որոնք բանկագին ատաղձ են Հա-

յոց եւ, ի մասնաւորի, Հ. Յ. Դաշնակ-
 ցութեան պատմութեան համար: Կան
 եւ պարզ ընթերցանութեան համար յա-
 փշտակիչ էջեր: Դժբախտաբար, հատո-
 րին չէ կցւած բովանդակութիւնը, որով
 դժուար է լինում ուզւած նիւթը գտնել:
 Պակաս է եւ յատուկ անունների ցանկը,
 ինչ որ անհրաժեշտ է նման գործի հա-
 մար: Գրքի վրա նշանակւած է «Ա. հա-
 տոր», պէտք է յուսալ, ուրեմն, որ յա-
 ջորդ հայտնուում կը լրացւի այդ բերին:
 Գին նշանակւած է մէկ տոլար, որ շատ
 ածան է: Ամէն հայ մտաւորական իր
 գրադարանում պէտք է ունենայ այդ
 հատորը:

«ԶԻԱՐԹՆՈՅ»

224 մեծադիր էջ, լաւ թուղթ, պատ-
 կերագարդ, մաքուր տպագրութիւն,
 բազմազան բովանդակութիւն — անս
 Հր. Բալուեանի գրականութեան եւ ար-
 ւեստի տարեգիրքը: Հր. Բալուեանը
 հինն ու նորը իբր էր բերել, երէց աւ
 երիտասարդ գրողները հաւաքել մի

յարկի տակ եւ տւել է տեսողութեան ու
 մտքի համար հաճելի հատոր: «Զը-
 ւարթնոց»-ի մէջ կան անտիպ կտորներ
 Թեոդիկից, Կուխտասից, Մ. Վարանդ-
 եանից, Սիպիլից, Մ. Զարիֆեանից:
 Նիւթեր տրամադրել են Գարեգին Աբբ.
 Յովսէփեանը, Յ. Օշականը, Կ. Զար-

էանը, Հր. Զարդարեանը, Ղ. Մելոյեանը, Գ. Մխիթարեանը, Շ. Նարդուհին եւ ուրիշներ: Ի հարկէ, բոլոր նիւթերն էլ նոյնարժէք չեն. բուււմ է, բէ ընտրութեան ժամանակ կարելի էր աւելի

խտապահանջ լինել, բայց, ընդհանուր առմամբ, գոհացուցիչ են: Մեր նիւթական պայմաններում Հր. Բալուեանի գործը շնորհաւորելի է եւ քաջալերանքի արժանի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ

Մեր աշխատակից Դոկտ. Արեգեան արձակ քարգմանութեամբ գերմաներէնի է վերածել եւ զանազան ժամանակներ գերման մամուլի մէջ լոյս ընծայել Յովհ. Թումանեանի աւանդակէրից շատերը: Այդ քարգմանութիւնները մի կարեւոր մասով նախապէս հրատարակել են Բերլինի Օսկար Քիւլ (O. Kuehl) մամուլի դիւանի կողմից եւ սպա նրա միջոցով արտատրութեան իրաւունք տրւել զանազան օրգաններին: Լոյս են տեսած ցարդ.

1.- *Արեւ եւ Լուսին* (Die Sonne und der Mond): Ա. սպագրութեամբ՝ Leipz. N. Nachr. օրաթերքում (31 մայիս 1925 թ.), Բ. սպագրութեամբ՝ Deutsche Werkm. Zeitung-ի մէջ (27 սեպտ. 1929 թ.):

2.- *Անբախտ վաճառականներ* (Die ungluecklichen Kaufleute): Ա. սպագրութեամբ՝ Բերլինի Neue Zeit թերքում (24 մայիս 1925), Բ. սպ.՝ Օ. Քիւլի մամուլի դիւանում (5 ապր. 1927 թ.):

3.- *Փարվանա* (Parwana), Օ. Քիւլի մամուլի դիւան (9 մարտ 1926 թ.):

4.- *Մի կաթիլ յեղը* (Um einen Tropfen König): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

5.- *Զարի վերջը* (Des Boesen Ende): (23 փետր. 1928):

6.- *Աղջկայ սիրտը* (Des Maedchens Herz): Նոյնտեղ (6 դեկտ. 1928):

7.- *Պօղոս - Պետրոս* (Peter Paul): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

8.- *Աղաւնու վանքը* (Lenktemur): «Der Orient» ամսագիր (մարտ - ապրիլ 1930 թ.):

9.- *Լօռեցի Սաբօն* (Loretzi Sako): Frau Meisterin: Յաւելած D. Werkm. Zeitung-ի (8 օգոստ. 1931):

10.- *Շունն ու կատուն* (Der Hund und der Kater): Օ. Քիւլի մամուլի դիւան (11 օգոստ. 1932 թ.):

11.- *Անիծած հարսը կամ Յոսպպի ծագումը* (Der Wiedehopf oder die verfluchte Schwiegertochter): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

12.- *Արծիւն ու կաղնին* (Der Adler und die Eiche): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

Յովհ. Թումանեանի միւս գրածֆներից Ա. Արեգեանը քարգմանել եւ տրպագրել է.

13.- *Գիւրը* յայտնի գրածֆը (Gikor). համառօտած: Լոյս է տեսած նախապէս Օ. Քիւլի մամուլի դիւանում (12 ապրիլ 1928 թ.):

14.- *Տէրն ու ծառան* հեֆեսքը (Der Herr und Sein Diener): Նոյնտեղ (19 մայիս 1932 թ.):

Թարգմանած եւ *անտիպ* են տակաւին Յովհ. Թումանեանի նման մի քանի ուրիշ գրածֆներ եւ հեֆեսքներ:

1.- Թմկաբերդի առումը: 2.- Այսբամար: 3.- Գառնիկ ախպէր: 4.- Քաջ